ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 127-Ա «12» 04 2024թ. ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգըև դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի

2024 թվականի ապրիլի 12-ի № 127-Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1.Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քարտուղարությունում՝ Կոմիտեի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ հանձնարարականների իրականացման համար՝ (Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներում առկա համակարգիչների պարբերական ծրագրային թարմացումներն իրականացնելու, շահագործվող տեղեկատվական համակարգերի և ներքին համակարգչային ցանցի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ, տեղեկատվական համակարգերի ոլորտում առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ,
2) «Տեղեկատվության ազատության մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքների անհրաժեշտ իմացություն,
3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,
4) ցանցի հետ կապված խնդիրների, ծրագրային և համակարգային անսարքությունների վերացման ունակություն,
5) կազմակերպչական և վերջնաժամկետներում առաջադրանքների կատարման հմտությունների տիրապետում,
6) արդյունավետ հաղորդակցման և պլանավորման հմտությունների տիրապետում,
7) հարմարվողականություն/ճկունություն, խնդիրների լուծման հմտություններ:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. Կոմիտեի ներքին համակարգչային ցանցի անխափան աշխատանքի ապահովում՝ ցանցային մալուխների տեղակայում և ցանցային սարքավորումների տեղադրում, խնդիրների հայտնաբերում և կարգավորում,

բ. շահագործվող տեղեկատվական համակարգերի և ծրագրերի անխափան աշխատանքի ապահովում,

գ. համակարգիչների, տպիչ և պատճենահանման սարքավորումների տեղադրում և ծրագրային սպասարկում, համակարգիչների խափանման պատճառի հայտնաբերում և արագ կարգավորում,

դ. ինտերնետային կապի անխափան աշխատանքի ապահովում,

ե. Կոմիտեի քարտուղարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ

Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է վեց ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«ե» ենթակետերով սահմանված արդյունքների:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«ե» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. Կոմիտեի ներքին համակարգչային ցանցի անխափան աշխատանքը ապահովված է՝ ցանցային մալուխները տեղակայված են և ցանցային սարքավորումները տեղադրված են, խնդիրները հայտնաբերված և կարգավորված են,

բ. շահագործվող տեղեկատվական համակարգերի և ծրագրերի անխափան աշխատանքը ապահովված է,

գ. համակարգիչները, տպիչ և պատճենահանման սարքավորումները տեղադրված են և իրականացված է ծրագրային սպասարկում, համակարգիչների խափանման պատճառները հայտնաբերված և արագ կարգավորված են,

դ. ինտերնետային կապի անխափան աշխատանքը ապահովված է,

ե. Կոմիտեի քարտուղարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ իրականացված են: